## Տ. ԹԱԴԵՈՍ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ



Ծնվել է 1950 թ. հոկտեմբերի 17-ին, Բաքու քաղաքում։

1959—69 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 15 ռուսական միջնակարգ դըպրոցը։

1970—72 թթ. ծառայել է սովետական բանակում։

1975—77 թթ. սովորել և ավարտել է Բաքվի պլանա-տնտեսագիտական տեխնիկումը։

1978—83 թթ. սովորել և ավատրել է Բաքվի ժողտնտեսության ինստիտուտը։

1984 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան։

1987 թ. դեկտեմբերի 25-ին, Ստեփանոս Նախավկայի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ։

1988 թ. մարտի 10-ին, «Իրինիոս Լուգդինացու աստվածաբանական հայացքները» թեմայով պաշտպանել է ավարտաճառ և արժանացել լավ գնահատականի։

Այժմ քահանայագործության է նշանակված ՀՍՍՀ Սիսիանի շրջան։